Մխիթար Գոշ

Դեղձը և Սերկևիլը

Ատյանում մեկ անգամ դեղձը հանգիմանել սկսեց սերկևիլին, ասելով:

Տեսքով դեղին ես ու մարդկանց համար դժվարուտելի: Իսկ ես բարետես եմ ու դյուրաճաշակ:

Եվ նա ասում է.

Կեղծավոր ես ամենևին և մարդկանց խաբող, ճաշակելիս քաղցր ես երևում, բայց մտնելով որովայն, շատ վնասներ ես գործում: Իսկ ես դեղին եմ, քանի որ տեսակցության գնալով և հիվանդությունը վերացնելով, ցավակից եմ դառնում հիվանդներին, և ոչ թե քեզ պես մերժված եմ նրանցից:

Պարզ է միտքը առակիս, կեղծավորները միշտ ճշմարիտներին հանդիմանում են իբրև վարքով կոպիտների, և ներկայացնում իրենց քաղցրաբարո և վշտակից: Սակայն ճշմարիտ խոսքերը մարդկանց դեղ են, թեև առաջին հայացքից հակառակ են երևում և ցավակցելով նրանց՝ վերացնում են հիվանդությունները: